

ԴԵՐԱՅԱՆԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՄԵԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

ԳԱՅԱՆԵ ՊԱՊՈՅԱՆ

Բառակապակցությունների վերաբերյալ գիտական ուսմունքը, թեև սկսել է ձևավորվել բավականաչափ ուշ՝ XIX դարի 70—80-ական թվականներից, սակայն բառերի կապակցությունների, դրանց լեզվական-կառուցվածքային յուրահատկությունների մասին դիտողություններ գտնում ենք քերականական ամենավաղ շրջանի աշխատություններում:

Անցյալի հայ քերականներից բառակապակցության հարցին անդրադարձել են լատինատիպ քերականությունների ժամանակներից:

Ս. Զուլայեցին, Կ. Գալանոսը, Հ. Հոլովը, Շրոդերը, Բաղդասար Դպիրը, Մ. Սեբաստացին իրենց աշխատություններում այլևայլ առիթներով, հատկապես խոսքի մասերի ուսմունքի հետ կապված, խոսել են նաև կապակցությունների զանազան տիպերի մասին: Սակայն բայերի կապակցության եղանակները, խնդրառության ձևերը և դրանց շարահյուսական միջոցները առավել հանգամանորեն քննված են Մ. Չամչյանի «Քերականութիւն Հայկազեան լեզուի» աշխատության մեջ¹: Այստեղ նորը բառակապակցության՝ շարահյուսական իրողությունների, մանավանդ նախադասության ուսմունքի հետ կապելն է: Կապակցությունը շարահյուսական տեսանկյունով է քննում նաև Գ. Ավետիքյանը իր «Քերականութիւն հայկական» (Վենետիկ, 1815) գրքում: Սա ավելի ևս զարգացնում է Մ. Չամչյանի ուսմունքը խոսքի մասերի շարահյուսական կիրառության մասին: «Նա կապակցությունների ուսմունքը հարմարեցնում է նախադասության ուսմունքին»²:

Հետագա քերականություններում, այդ թվում Հ. Ավգերյանի «Քերականութիւն անգղիական և հայերէն» (Վենետիկ, 1817), Վ. Չալոխյանի «Քերականութիւն Հայկազեան լեզուի» (Վենետիկ, 1827), ապա ավելի ուշ՝ Ա. Բաղդասարյանի «Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց» (Վենետիկ, 1852) և մասնավորապես Ա. Այտընյանի «Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» (Վենետիկ, 1866) գրքերում կապակցության ուսմունքը հետզհետեւ տարրալուծվում է շարահյուսության ուսմունքի մեջ, իսկ շարահյուսության քննության բուն առարկան, նրա սկզբնականում ու վերջնականորեն համարվում է նախադասությունը: Այդ ուսմունքի լավագույն արտահայտությունը տրվում է Ստ. Պալասանյանի «Գործնական քերականութիւն հայերէն լեզուի» գրքում (Թիֆլիս, 1869) և հատկապես «Քերականութիւն մայրէնի լեզուի» (Թիֆլիս, 1874) աշխատության մեջ: Այստեղ կարևոր նորությունն այն է, որ շարահյուսական իրողությունները, ինչպես նաև կապակցության եղանակներն ու ձևերը, համակարգվում ու քննվում են առանձին բաժնում՝ ձևաբանությունից մեկուսի ու անկախ: Շարահյուսության, մասնավորապես, կապակցության հարցերի քննությանն է նվիրված «Քերականութիւն մայրէնի լեզուի» գրքի երրորդ մասը, որտեղ հաջորդաբար ուսումնասիրվում են կապակցությունը «մասանց բանի» և «կապակցությունը նախադասությունների»: Ստ. Պալասանյանը հատուկ քննության է ենթարկում կապակցության եղանակները: Թեև նա դեռևս չունի բառակապակցության քերականական կարգի ըմբռնումը, սակայն ճանա-

¹ Վ. Ա. Բոսյան, Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Երևան, 1975, էջ 20:

² Նույն տեղում, էջ 21:

յում է դերբալական դարձվածը և նրա առնչությունը կախյալ նախադասության հետ: Նա նկատում է նաև հիշյալ երկու շարահյուսական իրողությունների փոխակերպման ներքին հնարավորություններն ու ձևերը: Ինչպես իր քերականական ընդհանուր սկզբունքներով, այնպես էլ դերբալական կապակցության և կախյալ նախադասության փոխհարաբերության ու փոխկապակցության գնահատման հարցում Ստ. Պալաստիանը հետևում էր երիտքերականների դպրոցի, մասնավորապես, Ֆ. Բուսլակի շարահյուսական ուսմունքին:

Արևելահայ աշխարհաբարի կապակցությունների նշանակներն ու ձևերը առավել հանգամանորեն ու խորությամբ քննել է Մ. Աբեղյանը, որը ևս հետևյալում էր երիտքերականների սկզբունքներին³: Վերջինս, ըստ էության, արևելյան աշխարհաբարի դիտական քերականության հիմնադիրն է ու նրա կառուցվածքային համակարգի հմուտ հետազոտողը: Ծիշտ է նկատված, որ նրա ռեքրականական ուսումնասիրությունների առաջին և մեծագույն արժեքը այն է, որ դրանց շնորհիվ մեր գրական լեզվի քերականական կառուցվածքի նկարագրությունը լիովին ու վերջնականապես ազատագրվեց գրաբարյան քերականական սխառմաներից և ունեցավ իր ինքնուրույն սխեմաները⁴: Մ. Աբեղյանի քերականական համակարգում հատուկ տեղ է գրավում կապակցությունների, այդ թվում՝ նախադասության (իր արտահայտությամբ՝ խոսքի) անդամների, բարդ նախադասությունների բաղադրիչների և բառերի կապակցությունների ուսմունքը:

Նրա «Աշխարհաբարի շարահյուսության» (Վաղարշապատ, 1912) «Բառերի կապակցությունը խոսքի մեջ» գլխի երկու ենթաբաժիններում՝ «Շուրջների նշանակությունն ու կիրառությունը»⁵ և «Կապերի նշանակությունն ու կիրառությունը»⁶, քննված են բառերի կապակցության հիմնական տարատեսակները, ավելի ստույգ՝ ստորադասական հարաբերությամբ կապակցության կախման հարաբերությունը, այսինքն՝ խնդրառությունը կամ վարումը⁷:

Ավելի ուշ հայ քերականագիտության մեջ բառերի կապակցությունները այլևայլ տեսանկյուններով ուսումնասիրության նյութ են դարձրել Վ. Առաքելյանը՝ իր «Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները» (Երևան, 1957), և «Հայերենի շարահյուսություն» (հ. Ա, Երևան, 1958), Ա. Մարգարյանը՝ «Արդի հայերենի կապերը» (Երևան, 1955), Ս. Աբրահամյանը՝ «Զթեքվող խոսքի մասերը հայերենում» (Երևան, 1959) աշխատություններում: Հայերենի բառակապակցությունները առանձին քննության նյութ են դարձել և ավելի խորքով ու լայնքով ուսումնասիրվել են Վ. Քոսյանի մի շարք հոդվածներում և մասնավորապես «Ժամանակակից հայերենի բառակապակցությունները» (Երևան, 1975) և «Միջին հայերենի բառակապակցությունները» (Երևան, 1984) աշխատություններում: Դերբալական դարձվածին, իբրև բառակապակցության տարատեսակի, անդրադարձել է Գ. Սևակը իր «Հայոց լեզվի շարահյուսություն» դպրոցական դասագրքում: Ծիշտ է, դպրոցական նորմատիվ քերականության պահանջների թելադրանքով և հնարավորությունների սուղ պայմաններում նա չէր կարող խնդիրը գիտական հատուկ քննության ենթարկել, սակայն նրա տված սահմանումը ընդհանուր ճանաչում է գտել հայ քերականագիտության մեջ և այժմ էլ համարվում է հայոց շարահյուսագիտության ավանդական-դասական դրույթներից մեկը: Հայերենի դերբալական բառակապակցությունները ավելի հանգամանորեն ուսումնասիրված են Ժ. Ծժմարիտյանի «Դերբալական դարձվածը արդի հայերենում» (Երևան, 1961) և Ա. Մարությանի «Դերբալական դարձված և

³ Այս մասին տե՛ս է. դ. Բ. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն, հ. 2, Երևան, 1962, էջ 134, Վ. Ա. Քոսյան, նշվ. աշխ., էջ 26:

⁴ է. դ. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 150:

⁵ Մ. Աբեղյան, Երկեր, հ. 2, Երևան, 1974, էջ 325:

⁶ Նույն տեղում:

⁷ Նույն տեղում:

ըմբռնմամբ՝ դերբայական դարձվածի կազմի մեջ, դրանք դասակարգված են գիտական հստակ ու կուռ սկզբունքով: Այդ սկզբունքի վրա է հենվում նաև դերբայական դարձվածի մեր ըմբռնումը:

Դերբայական դարձվածի լրացումների մասին հետազայում երևան եկան ոչ քիչ թվով և այլ տեսակետներ՝ մեծ մասամբ իրարամերժ ու հակասական: Այսպես՝ տակավին 1961 թ. Ժ. Ճշմարիտյանը դերբայական դարձվածին նվիրված աշխատության մեջ գրում էր. «...Ինչ պաշտոն էլ կատարելիս լինի նախադասության մեջ դերբայը (...), կարող է ունենալ բայական լրացումներ՝ խընդիրներ ու պարագաներ, ինչպես նաև ենթակա»⁹: Դերբայական դարձվածի կազմի մեջ, ուրեմն, ըստ հեղինակի, մտնում են խնդիրներն ու պարագաները, որոնք դերբայի լրացումներն են, ինչպես նաև հնթական, որի հարաբերությունը դերբայի նկատմամբ նույնպես լրացական է: Դա երևում է հետազաշարադրանքից. «...Դերբայական դարձվածի ենթական, խնդիրներն ու պարագաները դարձվածը կազմող դերբայի լրացումներն են»¹⁰: Այսպիսով, Ժ. Ճշմարիտյանը, ընդունելով դերբայական դարձվածի կազմի մեջ մտնող և նրա գերադաս բաղադրիչը կազմող դերբային լրացնող երեք կարգի լրացումները՝ ենթակա, խնդիր, պարագա, անտեսում է Մ. Աբեղյանի ականարկած առողջելին կամ առողջելիական վերադիրը:

Ավելի ուշ՝ 1971 թ. այս հարցին անդրադարձել է Ա. Մարությանը: Նա ավելի ևս սահմանափակում է դերբայի լրացումների թիվը: Նա ընդունում է, որ դերբայական դարձվածի կազմի մեջ ընդգրկվում և դերբայի հետ առնչվում են չորս կարգի անդամներ՝ ա) խնդիրներ, բ) պարագաներ, գ) ենթակա, դ) ստորոգելիական վերադիր: Սակայն մյուս կողմից էլ դերբայի լրացումներ է համարում միայն առաջին երկուսը, իսկ ենթական և ստորոգելիական վերադիրը հանում է լրացումների շարքից: Քննադատելով Գ. Սևակի հայտնի գրույթը, նաև, փաստորեն Ժ. Ճշմարիտյանի հիշյալ ըմբռնումը, Ա. Մարությանը գրում է. «...Դերբայի հետ սերտ միասնությամբ կարող են հանդես գալ և կապակցություն կազմել ոչ միայն դերբային անմիջապես լրացնող անդամները (խնդիրներ, պարագաներ), այլև հենց այդ դերբայի գործողությունը կատարողը, ուրեմն լրացում չէ: Հետևաբար ճիշտ չէ դերբայի հետ հանդես եկող և կապակցություն կազմող անդամները «լրացումներ» անունով կոչելը»¹¹: Այնուհետև վկայակոչելով բնագրային հետևյալ օրինակները՝ «Մարգարեանի իշխանի նեղակալը եկավ»¹²: Այսպիսով, դերբայական դարձվածի գերադաս բաղադրիչը կազմող դերբայի լրացումներից, ստորոգելիական վերադիրը բացի, հեղինակը հանում է նաև ենթական: Այս կարծիքը անվերապահորեն պաշտպանում է նաև Պ. Պողոսյանը¹³:

Ինչպես դժվար չէ նկատել, դերբայական դարձվածի հիմքը կամ միջուկը կազմող դերբայի լրացումներից՝ խնդիրների և պարագաների հարցը հայ քերականագիտության մեջ որևէ մեկը չի վիճարկում: Վեճի նյութ է ենթակայի և ստորոգելիական վերադրի խնդիրը: Ա. Մարությանը հարցի լուծումը թողնում է առկա և բավարարվում է նշելով, որ դրանք դարձվածի կողմնակի ան-

9 Ժ. Ճշմարիտյան, Դերբայական դարձվածը արգի հայերենում, Երևան, 1961, էջ 45:

10 Նույն տեղում, էջ 46:

11 Ա. Մարության, Դերբայական դարձված և նախադասության կողմնակի անդամներ, Երևան, 1971, էջ 28:

12 Նույն տեղում, էջ 28:

13 Պ. Պողոսյան, Հայոց լեզու: Ուսումնասովնական ձեռնարկ, Երևան, 1976, էջ 224: Լրաբեր 3—3

դամներն են: Պ. Պողոսյանը կողմնակի ենթական համարում է տրամաբանական ենթակա, ստորոգեծիական վերադիրը՝ դերբայի հետ ներունակական հարաբերությամբ կապված անդամ¹⁴:

Նախ՝ ենթակայի մասին:

Ենչ բան է դերբայի ենթական դերբայական դործվածի կազմում, ասենք՝ ԼՎ Բայլելը: Իմաստային առումով սա նշում է դերբայի արտահայտած գործողության տիրողը՝ կատարողին: Այս տեսակետից այն իր բովանդակությամբ չի տարբերվում երկկազմ նախադասության ենթակայից՝ Ես Բայլում եմ→Իմ Բայլելը: Տարբերությունը արտահայտման պլանում է: Երկկազմ նախադասության ենթակայի և բայ-ստորոգյալի միջև չկա լրացում-լրացյալի շարահյուսական հարաբերություն: Հայերենում դրանք գտնվում են դիմային և թվային փոխհամոձայնության մեջ: Դրանց կապակցության եղանակը, ուրեմն, համաձայնությունն է: Ինչ վերաբերում է դերբայի և սրա ենթակայի շարահյուսական հարաբերությանը, ապա այստեղ գործում է կապակցության այլ եղանակ՝ վարում կամ խնդրառությունը: Եվ դա հասկանալի է: Դերբայն իր ենթակայի հետ կազմում է բառակապակցություն, ավելի ստույգ՝ դերբայական կապակցություն կամ, որ նույնն է, դերբայական դարձված: Իսկ որ դերբայական դարձվածը դերբայ գերադաս բաղադրիչ ունեցող բառակապակցություն է, անառարկելի է: Այս փաստը չեն կարող չընդունել անգամ այն հետազոտողները, ովքեր մերժում են ենթակայի լրացական հարաբերությունը դերբայի նկատմամբ:

Այսպիսով, եթե դերբայական դարձվածը բառակապակցություն է, ապա նրա բաղադրիչների միջև պետք է որ առկա լինեն գերադասական և ստորադասական հարաբերություններ: Եվ քանի որ գերադաս դիրքում գտնվում է դերբայը, բնականաբար նրա հետ առնչվող բոլոր անդամները, անկախ իրենց շարահյուսական գործառությունից, նրա նկատմամբ լրացական, այսինքն՝ ստորադասական հարաբերության մեջ են: Այդպիսի հարաբերության մեջ է գտնվում նաև ենթական: Սա մեկ կռիվն է:

Երկրորդ: Դերբայի, կամ ինչպես ընդունված է կոչել՝ կողմնակի ենթական ունի իր որոշակի ձևը, քերականական որոշակի ձևավորումը՝ ուղղական կամ սեռական հոլով (Դուրք բացվելիս, Իմ գալը): Առաջին դեպքում կողմնակի ենթական իր ձևով նման է նախադասության դիմավոր բայի ենթակային: Ուստի, չի բացառվում, որ նախադասության բուն ենթական և դերբայի ենթական նույնանան: Օրինակ՝ Երեխաները տուն գնալուց հետո սկսեցին պարապել: Այս և նման պարագաներում ենթադրյալ կողմնակի ենթական դուրս է գալիս դերբայի հետ քերականական կապակցության ոլորտից և կապակցվում է դիմավոր բայի հետ՝ նրա հետ համաձայնելով դեմքով ու թվով [Երեխաները (հոգնակի, III դեմք) սկսեցին (հոգնակի, III դեմք)]: Հետևաբար, հիշյալ նախադասության մեջ դերբայական դարձվածը ոչ թե «երեխաները տուն գնալուց ճեղք» կապակցությունն է, այլ «տուն գնալուց ճեղք»: Այս դարձվածի ենթական ըմբռնվում է, Մ. Աբեղյանի խոսքով ասած, «ներքին զորությամբ»: Որ այս դարձվածի ենթական բառաքերականական արտահայտություն չունի, ապացուցվում է նրանով, որ երեխաները ենթակայի հոգնակի թիվը թելադրելիս է ոչ թե դերբայի խնդրառությամբ [(տուն) գնալուց (հետո)], այլ սկսեցին բայ-ստորոգյալի պահանջով [երեխաները սկսեցին (պարապել)]: Մյուս կողմից՝ հնարավոր է, որ նախադասության ենթական և դերբայի ենթական բնավ չզուգահեռվեն: Օրինակ՝ Երեխաները տուն գնալուց հետո աղվալիք դադարեց: Այս կառույցի նախադասություններում, երբ դերբայի ենթական դրվում է ուղղական, սպասելի է (և ճիշտը դա է), որ նրանց և դիմավոր բայի ենթակաները նույնը լինեն (հմմտ. վերի օրինակը): Էլ չենք խոսում այն մասին, որ հայտնի կառույցներում դիմավոր բայի և դերբայի ենթակաների նույնությունը պարտադիր է. բացառված է, օրինակ՝ Երեխաները տուն գնալով՝

աղմուկը դադարեց տիպի կապակցությունը: Այս իսկ պատճառով բայ-ստորոգյալի և դերբայի ենթակաները տարբերակելու համար մեր լեզուն ստեղծել է մի լրացուցիչ միջոց՝ կողմնակի ենթականի սեռականով արտահայտությունը (սրեխաների տուն գնալուց հետո աղմուկը դադարեց):

Ուրեմն, դերբայի ենթական կարող է արտահայտվել նաև սեռական հոլովով, և սա ավելի ճիշտ է ու օրինակալի: Կողմնակի ենթական իսկապես ենթակա էլ չէ՝ սրա ժամանակակից ըմբռնմամբ, քանի որ այն որևէ համաձայնության մեջ չի գտնվում դերբայի հետ և սրա դեմքի բացահայտիչը չէ, այլ լրացում՝ ենթակայական լրացում: Դեռևս Մ. Աբեղյանն էր նկատել. «...Կողմնակի ենթական դեմքի լրացում, իսկապես ենթակա էլ չէ, այլ ենթակայական խնդիր»¹⁵: Ուստի և ենթական ճանորդ դերբայի հետ սովորաբար ոչ քն ուղղակյանով է արտահայտվում, այլ ենթակայական սեռականով. ինչպես՝ փոխանակ ասելու սայլը շրջվելուց հետո... ասվում է՝ սայլի շրջվելուց հետո»¹⁶:

Այսպիսով, եթե երեխաների գնալը, սայլի շրջվելը (նաև՝ սայլը շրջվելը) կապակցություններում ունենք երկու վերլուծելի բաղադրիչներ, որոնք միանգամայն տարբեր շարահյուսություններ են, ապա դրանք պետք է որ կապակցվեն կապակցության՝ հայերենում ընդունված եղանակներից մեկնումեկով՝ համաձայնությամբ, խնդրառությամբ կամ առդրությամբ: Արդեն տեսանք, որ ենթական դերբայի հետ չի կարող կապակցվել համաձայնության որևէ արտահայտությամբ: Այն չի կապակցվում նաև առդրությամբ, որովհետև գործառնվում է միայն և միայն հոլոված ձևով՝ առավելապես՝ սեռական, մասամբ՝ ուղղական (սայլի (սայլը) շրջվելը): Մնում է ստուգապես արձանագրել, որ կողմնակի ենթակայի և դերբայի կապակցության հնարավոր միակ եղանակը խնդրառությունն է: Խնդրառությունն էլ հատուկ է բառերի միայն և միայն ստորադասական կապակցությանը: Իսկ սայլի (սայլը) շրջվելը կապակցության մեջ ո՞րն է լրացումը, ո՞րը՝ լրացյալը: Ավելորդ է ասել, որ լրացյալը դերբայն է, որ դերբայական ամեն կապակցության կամ դարձվածի գերադաս՝ իշխող բաղադրիչն է: Նրա ենթական էլ դերբայի լրացումն է: Ինչ վերաբերում է ճորամաբանական՝ կողմած ենթակային, ապա սա, ինքնին հասկանալի է, քերականական կարգ չէ, այլ հոգեբանա-տրամաբանական: «Քանի՞ ձեռքից եմ վառվել, Վառվել ու հուր եմ գառել...» (Հովհ. Թումանյան) նախադասության մեջ ձեռքից-ը տրամաբանական ենթական է, մինչդեռ քերականորեն այն ներգործող խնդիր է:

Երրորդ. տեսնենք, թե ինչ բան է «ներուճական հարաբերությունը», որով, իբր, կապված են կողմնակի ստորոգելիական վերադիրը և դերբայը: Նախ կրկին անգամ նշենք, որ վերացական կողմած բայերի հատկանշանիշ կամ, այսպես ասած, «հենարան» բառ լրացումները կարող են կապվել հիշյալ բայերի ոչ միայն դիմավոր, այլև դերբայական ձևերի հետ. համառ. նա հերոս հռչակվեց→նրա հերոս հռչակվելը, «Համբոն ուզում էր իր տասներկու տարեկան Գիթորին տանի քաղաք, մի գործի տա, որ մադդ դառնա» (Հովհ. Թումանյան) մադդ դառնալը և այլն: Ըստ որում՝ կապակցության եղանակը նույնն է, բայց այդ մասին՝ քիչ հետո: Գալով «հերոսնակային» հարաբերությանը, որով իբր թե կապվում են կողմնակի ստորոգելիական վերադիրն ու դերբայը, նշենք, որ այս տերմինը նորություն չէ հայ քերականագիտության մեջ: Մ. Աբեղյանի քերականական համակարգում այն արտահայտում էր որոշակի հասկացություն: «Բառերի ստորադասությունը,—գրում էր նա,—իր տրամաբանական ձևով երկու տեսակ է՝ կախում և հերոսնակություն:

Կախման հարաբերության մեջ լրացում գոյականը ենթարկվում է լրացյալին, որ իր նշանակությամբ իշխում է նրան՝ խնդրելով, պահանջելով, որ իր լրացումը դրվի այս կամ այն ձևով: Լրացումի կապակցության եղանակը և հարաբերությունն իր լրացյալի հետ՝ կախված է լրացյալից: Օրինակ՝ տրական

¹⁵ Մ. Աբեղյան, երկեր, հ. 2, էջ 330:

¹⁶ Նույն տեղում:

հոլովն րնկերիս կախված է օգնեցի ըստի բայիմաստից (ընկերիս օգնեցի)... Կախման հարաբերությունը քերականության մեջ կոչվում է խնդրառություն կամ վարում...:

«Ներունակության հարաբերության մեջ լրացումի ցույց տված գաղափարը մտածվում է իբրև իր լրացյալի մեջ արդեն պարունակված և նրա հետ միանում, համաձուլվում է իբրև մի գաղափար. կամ թե լրացումն ըմբռնվում է իբրև իր լրացյալի հրկրորդ անգամ կրկնությունն ուրիշ բառով, այնպես որ լրացումն իր լրացյալին ստորադասվելով հանդերձ՝ խոսքի մեջ մի տեսակ նրան հավասար պաշտոն է վարում...»¹⁷: Եզրափակելով՝ Մ. Աբեղյանը նշում է այն զույգ անդամները, որոնց միջև եղած ստորադասական հարաբերությունը արտահայտվում է ներունակությամբ, դրանք են՝ բացահայտիչն ու բացահայտյալը և ենթական ու ստորոգյալը¹⁸:

Ընդ որում բացահայտիչ «գաղափարն» է առկա բացահայտյալի մեջ՝ իբրև «լրացյալի հրկրորդ անգամ կրկնությունն ուրիշ բառով», ինչպես և ենթական «գաղափարը»՝ ըստ-ստորոգյալի մեջ: Ես-ի գաղափարն է, որ պարունակվում է կղառնամ <ուսուցիչ> բայի մեջ և ոչ թե ուսուցիչ հատկանշանիչ բառի: Կղառնամ բայից բնավ չի բխում ուսուցիչ-ը, այլ բխում է միայն ես-ը՝ ենթական (ես→կղառնամ): Ուրեմն ստորոգելին չի կարող ներունակային հարաբերությամբ կապակցվել բայ-ստորոգյալի հետ, այլ միայն կախման հարաբերությամբ:

Մեղ հնաաբերորդ խնդրին անդրադարձել է նաև Հ. Հարությունյանը՝ իր «Կառավարումը ժամանակակից հայերենում» աշխատության մեջ: Նա իրողությանը մոտենում է միանգամայն ճիշտ դիրքերից՝ ստորոգելին համարելով բայ-ստորոգյալի լրացում¹⁹: Ըստ որում՝ հեղինակը ստորոգելին բայի՝ «կառավարմամբ» (խնդրառությամբ) կապված լրացում է համարում, անկախ սրա կիրառությունից՝ դիմավոր լինի թե անդեմ²⁰: Այստեղ հարկ ենք համարում անել մի լրացում և ճշտում. բայի հետ՝ դիմավոր թե անգեմ, «կառավարմամբ» (խնդրառությամբ) են կապակցվում սոսկ հոլովելի խոսքի մասերով արտահայտված ստորոգելիները (նա գրող, բժիշկ, ուսուցիչ, մաքր դարձավ. Այդ ես եմ, դու ես և այլն): Ինչ վերաբերում է չհոլովվող խոսքի մասերին, դրանք, իբրև ստորոգելի, ոչ թե «կառավարմամբ» (խնդրառությամբ) են կապակցվում բայի հետ, այլ առդրությամբ. հմտ. Դժվարություններին չդիմադրելը հոգով ակառ լինելու նշան է. Չի կարելի անտարբեր լինել սեփական հոր նկամամբ. ակառ-ը և անտարբեր-ը առդրությամբ են կապված բայի հետ և ոչ թե խնդրառությամբ, որովհետև հոլովելի բառեր չեն:

Այսպիսով, գերբայական բառակապակցության գերադաս բաղադրիչի՝ դերբայի լրացումները գերբայական դարձվածի կազմում ժամանակակից հայերենում ստորաբաժանվում են չորս խմբի՝ 1) ենթակայական, 2) ստորոգելիական, 3) խնդրային և 4) պարագայական:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ИЗУЧЕНИЯ ПРИЧАСТНО-ДЕЕПРИЧАСТНОГО ОБОРОТА И ЕГО ЧЛЕНОВ

ГАЯНЭ ПАПОЯН

Резюме

Причастно-деепричастный оборот—это один из видов словосочетания, в котором в качестве главного компонента выступает причастие

¹⁷ Նույն տեղում, էջ 324:

¹⁸ Նույն տեղում, էջ 324—325:

¹⁹ Հ. Հարությունյան, Կառավարումը ժամանակակից հայերենում, Երևան, 1983, էջ 184:

²⁰ Նույն տեղում, էջ 183—184:

или деепричастие. Причастно-деепричастная конструкция имеет не информативный, а номинативный характер, чем и отличается от предложения, которое несёт информацию. В качестве непосредственных составляющих такой конструкции (НС), кроме причастия или деепричастия, выступают все виды дополнения и обстоятельства, а также подлежащее и предикатив. Дополнение, обстоятельство, подлежащее и предикатив в современной армянской грамматистике называются вторичными (*կողմնակի*) членами оборота. Как вторичное дополнение и обстоятельство, так и вторичное подлежащее и предикатив являются подчинёнными компонентами причастно-деепричастной конструкции, типом же их связи с причастием или деепричастием является управление.